Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր նկարագիր	
Ծրագրի անվանումը	032101.00.7 Լրագրություն
Ընդհանուր նկարագրությունը	Մագիստրոսի կրթական ծրագիրը կառուցված է հետևյալ հիմնական կրթամասերից՝ ընդհանուր կառուցամաս,Հատուկ մասնագիտական կառուցամաս առարկաներ ուսանողի ընտրությամբ, պրակտիկա, գիտահետազոտական աշխատանք: Ծրագիրը ներառում է հու¬մա¬նի¬տար, տնտեսագիտական, հոգեբանական ոլորտ¬ներից անհրաժեշտ դասընթացներ, ինչպես նաև կամընտրական և մասնագիտական դասընթացներ, գիտահետազոտական պրակտիկա: Ուսման տևողությունը 1,5 տարի է՝ 3 կիսամյակով: 1-ին կիսամյակը ներառում է 16 շաբաթ, իսկ 2-րդը՝ 12 շաբաթ: Ծրագիրը բազմաբնագավառ է և ապահովում է անհրաժեշտ կոմպետենցիաներ:
Ուսումնական պլանը	https://sportedu.am/wp-content/uploads/2024/08/մագ-լրագ-հեռակա.pdf
Շնորհվող աստիճանը	Լրագրության մագիստրոս
ՈԱՇ մակարդակը	Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ
Կրեդիտները	60
Ուսուցման ձևը	Հեռակա
Ծրագրի տևողությունը	1,5 տարի
Դասավանդման լեզուն	Հայերեն
Ուսման վարձը	600 000 ՀՀ դրամ
Վերջնարդյունքը	Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Ա.1. Համատեղելու մասնագիտությանն առնչվող համացանցային ռեսուրսներն ու հիմնական հասկացությունները: Ա.2. Դասակարգելու մեդիայի և հաղորդակցության ուսումնասիրության և մի քանի այլ հարակից տիրույթների հիմնական տեսական մոտեցումներն ու վերլուծական գործիքները: Ա.3. Սահմանելու ոլորտի առանցքային հասկացությունները, ունենալու այդ մասին համակարգված և հիմնարար գիտելիքներ: Ա.4. Որոշելու զանգվածային հաղորդակցության համակարգում հասարակայնության հետ կապերին բնորոշ

	գործառույթներն ու ոլորտի գործնական, էթիկական-իրավական հիմնախնդիրները՝ համեմատական վերլուծություն կատարելով տեղական և միջազգային փորձի հետ: Ա.5. Ձևակերպելու մեդիակառավարման ոլորտի հիմնական սկզբունքներն ու գործառույթները Բ. Մասնագիտական գործնական կարողություններ և հմտութուններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Բ.1. Կազակերպելու տեղեկատվական, որոնողական աշխատանքներ, մեկնաբանել և քննադատորեն վերլուծել հենքային մասնագիտական տեղեկատվությունը: Բ.2. Գործնականում կիրառելու հետազոտության ժամանակակից մեթոդները մարզական լրագրության ոլորտում: Բ.3 Մշակելու և իրականացնելու սեփական մեդիածրագրերը: Բ.4 Կիրառելու սկզբնաղբյուրների, մասնագիտական գրականության մշակման մեթոդիկան մարզական տիրույթում հիմնախնդիրներն ուսումնասիրելիս: Բ.5. Գնահատելու և վերլուծելու ներկայիս մարզական լրագրության ռազմավարության արդյունավետությունը Բ. 6. Կատարելու վերլուծություններ հայրենական և միջազգային մարզական լրագրության ոլորտում՝ տարբեր ուղղություններով: Բ.7. Գնահատելու ցանկացած գերատեսչության կամ կառույցի հասարակայնության հետ կապերի գործընթացը: Բ.8. Օգտագործելու PR գործունեության, մեդիակառավարման արդյունավետ ռազմավարություններ սպորտի ոլորտում տարբեր իրավիճակների համար: Ա.9. Ընտրելու և կիրառելու PR գործիքակազմը: Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի Գ.1. Իրականացնելու հետազոտություն, վերլուծություններ՝ օգտագործելով գիտական հետազոտության մեթոդները: Գ.2. Իր գործունեությունը կառուցելու՝ հիմնվելով համամարդկային բարոյական արժեքների վրա և առաջնորդվելով ազնիվ մրցակցության սկզբունքներով Գ.3 Ինքնուրույն կատարելու ուսումնասիրություն, վերհանելու նյութի էությունը, իրականացնել գործունեության ռազմավարական պլնավորում: Գ.4. Պատշաճ կերպով բաշխելու ժամանակն ու ռեսուրսները և գտնելու արդյունավետ ուղիներ խնդիրները լուծելու համար

	Գ.5. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը: Գ.6. Դրսևորելու արդյունավետ թիմային աշխատանքի հմտություններ Գ.7. Ցուցաբերելու հասարակական պատասխանատվության և քաղաքացիական գիտակցության բարձր մակարդակ: Գ.8. Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:
Աշխատաշուկան	Ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան հետագայում աշխատել՝ լրատվական գործակալություններում, ռադիոհեռուստաընկերություններում, էլեկտրոնային լրատվամիջոցներում, մարզական կազմակերպություններում, սպորտի պետական լիազոր մարմնում, ազգային օլիմպիական կոմիտեում, մարզական ֆեդերացիաներում, ակումբներում, տարբեր կազմակերպությունների հասարակայնության հետ կապերի բաժիններում՝ որպես լրագրող, լրատվության պատասխանատու: